ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.**

1) –թյակ, տն-րեն, օրըստ-րե, օր-ր
2) աման-րյա, քնքշ-րոր, բաց-թյա, թիկն-թոց
3) բար-րություն, ջր-ռինեք, հ-գուտ, հ-դս ցնդել
4) հանապազ-րդ, բն-ռրան, նախ-ռե, ամեն-ռյա

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*.**

1) հեղ-եղուկ, հայթ-այթել, ընդ-անուր, ապաշնոր-
2) խոր-ուրդ, նշխար-, համ-արզ, նիր-ել
3) օր-ներգ, ընդ-ակառակը, աշխար-ազոր, խոտ-արք
4) անհեթ-եթ, արհամար-անք, անհողդ-ողդ, ընդ-ամենը

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *և*.**

1) հոգ-արք, հոգ-որական, ոսկ-արս, ար-ելք
2) ինչ-է, հոգ-որ, հետ-ակ, ս-եռամիտ
3) գին-աճառ, ուն-որ, հար-ան, գեր-արել
4) ագ-ազ, գոտ-որել, ուղ-արձ, սեթ-եթել

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *իա*.**

1) միմ-յն, հր-կան, կր-, Բեն-մին
2) Անդր-ս, Երեմ-, քիմ-, ակադեմ-
3) օվկ-նոս, փաս-ն, Կիլիկ-, Զաքար-
4) խավ-ր, Երմոն-, Եղ-զար, Բուն-թ

5 **Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***վաղորդայն*** - այգ, առավոտ, ***պարմանուհի*** - երիտասարդ աղջիկ
2) ***հովատակ*** - արու ձի, ***հոմանի*** - սիրեկան
3) ***սկեսրայր*** - ամուսնու հայրը, ***մեծատուն*** - մեծ տուն
4) ***հոպոպ*** - երկար կեռ կտուցով թռչուն, ***դժնդակ*** - դաժան

6 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա:***

1) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ, Երբ ամեն ինչ երազում է հոգու հետ:
2) Տխուր այդ երգը վաղուց եմ լսել, Կարծես թե ես եմ այդ երգը հյուսել:
3) Արդեն արծաթն է ցոլում մեկ-մեկ Ձեր ճոխ մազերի պարզ հյուսվածքներում:
4) Հայաստա՛ն, անունդ տալիս Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:

7	**Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.**

վեղար, ապահով, կնգուղ, սապատ, սմբուկ, դեղձան, որդի, քաղցրախոս, բաղրիջան, խարտյաշ, ռազմիկ, ուստր:

1) հինգ
2) չորս
3) երեք
4) երկու

8	**Ո՞ր շարքի բոլոր բառերում կա *պատում* արմատը:**

1) պատմություն, հրաշապատում, պատմուճան
2) արծաթապատում, պատմահայր, հնգապատում
3) իրապատում, պատմավեպ, դյուցազնապատում
4) պատմագիր, անպատում, կառուցապատում

9	**Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) հավատարմագրեր, ծաղկատոներ, կիզակետեր, գետեզրեր
2) տոհմածառեր, հենապյուներ, թոռնատերեր, քղանցքներ
3) հակինթաշարեր, լապտերավառեր, կողմնացույցներ, նավթամուղներ
4) զորաերթեր, շտաբներ, բելառուսներ, ցուցամոլներ

10	**Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:**

1) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
2) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուքով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
3) Մռայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
4) Աչքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:

11	**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) նախադուռ, գումարում, արյուն, նուռ
2) դերանուն, ամառ, շարժում, օրոր
3) ձմեռ, սառցալեռ, հաստատում, մանուկ
4) աշուն, որմնապյուն, ընդմիջում, արարում

12	**Տրվածներից քանի՞սն են ածականներ.**

վաղորդայն, մանուշակ, արծաթե, պարզ, բռունցք, աշխատանք, բարի, լուսե, աշխատանքային, մարմարե, հմայք, մոտեցում:

1) չորսը
2) երեքը
3) հինգը
4) վեցը

13 **Ո՞ր նախադասության մեջ թվականի կազմության սխալ ձև *չկա:***

1) Նոր բնակարան վարձելու առաջի օրն ինձ անսովոր էի զգում, հետո վարժվեցի:
2) Եվ Նոյը սպասեց դարձյալ յոթը օր, և խոր գիշերվա մեջ երկիրը հանդարտ ներքաշում էր ջուրը:
3) Բոբ շունը գելխեղդ էր, բրդոտ գամփռ, ես՝ կարմիր թշերով, ոտից գլուխ տասչորս տարեկան:
4) Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ՝ Պանինը:

14 **Ո՞րն է թերի նախադասություն:**

1) Այդ օրերին կյանքն ընթանում էր միօրինակ, և ամեն ինչ ձանձրալի էր:
2) Երեկոները մտնում էր մեր ննջարանը և հանգցնում լույսը:
3) Իմ մանկությունն անցել է այդ ագարակում, որը ես միշտ հիշում եմ:
4) Կային նաև ուրիշ աղջիկներ, որոնք շատ գեղեցիկ էին:

15 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Մութն ընկնելուն պես եկան Աշոտն ու Օհան ապերը, պատմեցին օրվա ամենավառ դեպքերը:
2) Ես չէի կարողանում սթափվել պատահածից հետո, սակայն ձիապանի խոսքերը ինձ անսպասելիորեն զգաստացրեց և մղեց նոր ձեռնարկումների:
3) Մեր հայացքներն իրար հանդիպեցին, փոքրիկ աղջիկն ինչ-որ բաներ ասաց, իսկ բազմությունը լուռ լսում էր:
4) Ձյան վրա մնացել էին վաղ առավոտյան խփված գայլի հետքերն ու արյան շիթեր:

16 **Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):**

Երկրի …….. համաձայն՝ թող ……., և արքայադուստրը …….սիրտը կտա ……..:

(1. հաղթանակել, 2. ինքը, 3. մենամարտել, 4. սովորություն)

1) 4, 3, 2, 1
2) 3, 1, 4, 2
3) 4, 1, 2, 3
4) 1, 4, 2, 3

17 **Տրված նախադասություններից որո՞մ է ենթական արտահայտված դերանունով:**

1) Սակայն այժմ անտեղի է քո ուրախությունը:
2) Ո՞վ է տեսուչը, որտեղի՞ց է եկել:
3) Խեղճը անօգնական փռվել էր գետնին:
4) Մեկը մատները բերանը տարավ ու զիլ սուլեց:

18 **Ո՞ր տարբերակում է տրված բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:**

Զբոսաշրջիկները կանգ առան Եգիպտոսի հայտնի բուրգերի մոտ, որոնք դարեր շարունակ հիացրել են ողջ մարդկությանը:

1) Զբոսաշրջիկները կանգ առան դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացրած Եգիպտոսի հայտնի բուրգերի մոտ:
2) Զբոսաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացնող հայտնի բուրգերի մոտ:
3) Զբոսաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացնելու պատճառով հայտնի դարձած բուրգերի մոտ:
4) Զբոսաշրջիկները կանգ առան Եգիպտոսի՝ դարեր շարունակ ողջ մարդկությանը հիացրած հայտնի բուրգերի մոտ:

19 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Իսկ ձմեռները քաղաքի աշխույժն ավելանում էր նրանով, որ թագավորն իր ամբողջ արքունիքով տեղափոխվում էր Դվին և ապրում էր միջնաբերդում մինչև գարնան կեսերը՝ լիարժեք վայելելով իր հանգիստը:

1)


2)


3)


4)


20 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Արևի շողերի միջից երևում էր կանաչով պատված բլուրը իսկ բլրի հետևում արտերն էին:
2) Իր բախտին ու բեռանը հնազանդ նա դանդաղ բարձրանում էր նեղ արահետով:
3) Նախկին ձիանոցը տան անդամների կողմից օգտագործվում էր որպես մառան:
4) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կհրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնկի շալակով փայտ կբերի:

21 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:**

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտակները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

1) 4, 2, 3, 1
2) 4, 3, 1, 2
3) 3, 2, 1, 4
4) 4, 2, 1, 3

22 **Տրվածներից ո՞րը Մովսես Խորենացու «Ողբ»-ում արծարծված թեմաներից *չէ:***

1) ազգային պետականության կործանումը
2) պատմիչների կողմից մեր պատմության աղավաղումը
3) անկարգության ու տգիտության արմատավորումը
4) իր ուսուցիչների մահը

23 **Ո՞ր պնդումն է սխալ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի վերաբերյալ:**

1) Բանաստեղծը հանդես է գալիս որպես ողջ քրիստոնյա մարդկության ներկայացուցիչ, որն իր վրա է վերցրել բոլորի մեղքերը:
2) Տարբեր գլուխներում առաջ է քաշվում մեղքի ապականությունից մաքրվելու, ապաշխարելու գաղափարը:
3) Որքան շատ են թվարկվում մարդկային մեղքերը, այնքան խորանում են հոգու տառապանքն ու ողբերգությունը:
4) Թեև անընդհատ շեշտվում է մարդու՝ Աստծո եզակի պատկերը լինելու գաղափարը, այնուամենայնիվ երկն ավարտվում է նրանով, որ մարդու հոգին մեռած է մեղքերի մեջ և փրկություն չունի:

24 **«Սասնա ծռեր» ժողովրդական էպոսում («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսուհին է, որ, Քուռկիկ Ջալալին հեծած, մի քանի տարի քաջաբար հսկում ու կառավարում է երկիրը:**

1) Ծովինար
2) Դեղձուն-Ծամ
3) Խանդութ
4) Գոհար

25 **Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդիս կանց մե ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցը փառքիս, հիմի դարըն շատացիլ է.
Բլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է.
Չի՛ն թողնում վախտին բացվելու. քաղերումեն բեզարիլ իմ:

1) «Աշխարումս ա Ֆս չիմ քաշի»
2) «Թամամ աշխար պըտուտ էկա»
3) «Աշխարս մե փանջարա է»
4) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»

26 **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերջում ո՞ւմ են տանում Կարս, ցույց տալիս այն եկեղեցին, որը նա կամենում էր վրաց ծեսով օծել, և այնտեղ կուրացնում:**

1) Աշոտ Բռնավորին
2) Գուրգենին
3) Բերին
4) Նսրին

27 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Էն վեհ վայրկենին չրքնաղ գիշերի՝
Երկրնքի անհո՜ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թրռած իրար են գալիս,
Գալի՜ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՜ւ, լազուր կամարում:

1) «Հավերժական սերը» (Ավ. Իսահակյան)
2) «Fatum» (Վ. Տերյան)
3) «Անուշ» (Հ. Թումանյան)
4) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)

28 **Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայում ի՞նչ է հիշեցնում Ճգնավորը հոգու երկվություն ապրող Աբեղային:**

1) Մարդկային կյանքը ունայն է՝ անկախ ապրելու եղանակից:
2) Աբեղան մեծացել և հասակ է առել վանքում և պետք է նրան հավատարիմ մնա:
3) Մարդը ծնվում է երջանիկ լինելու համար, ուստի պետք է հետևել սրտի ձայնին:
4) Աստված փորձություն է ուղարկել Աբեղային, և նա պարտավոր է հաղթահարել:

29 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,
Բուք հեգնեցին մեր կարոտները հրկեզ
Ու հեռացան: Ու ոչ մի լույս չքերին:

1) «Հարդագողի ճամփորդները»
2) «Մահվան տեսիլ»
3) «Տաղ անձնական»
4) «Դանթեական առասպել»

30 **Ո՞րը Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուներից** ***չէ:***

1) «Ծիածան»
2) «Որոտանի եզերքին»
3) «Իրիկնահաց»
4) «Քարափների երգը»

31 **Շարքերից և ժողովածուներից ո՞րը ումն է:**

ա. «Ցեղին սիրտը»	1. Վ. Տերյան
բ. «Երկիր Նաիրի»	2. Հ. Սահյան
գ. «Նոր տաղեր»	3. Դ. Վարուժան
դ. «Նաիրյան դալար բարդի»	4. Մ. Մեծարենց

1) ա-3, բ-1, գ-4, դ-2
2) ա-3, բ-4, գ-1, դ-2
3) ա-4, բ-1, գ-3, դ-2
4) ա-3, բ-2, գ-1, դ-4

32 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
Հայոց երգի
Անծիր հերկի
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատնընտիր սերմը նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի…

1) «Անլռելի զանգակատուն»
2) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
3) «Եռաձայն պատարագ»
4) «Մարդ էլ կա, մարդ էլ»

33 **Տրվածներից քանիսո՞ւմ են բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչները գրվում մեծատառով.**

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ, ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ, ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ, ԵՐԵՄՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՁԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ, ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆ:

34 **Բառերից քանի՞սն են *անհոդակապ*.**

սարսափազդու, թափանիվ, շաքարավազ, միգանուշ, ջրկիր, զարկերակ, կարոտակեզ, բարեգործ, այգեէտ, առապար:

35 **Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

դու, այս, այսքան, մեկմեկու, այսպես, միևնույն, ամենքը, համայն, ոչ մի, բոլոր:

36 **Տրված նախադասության մեջ քանի՞ անկախ դերբայ կա:**

Հասնելով խիտ կանաչներին՝ անասունները լավ կշտանալուց հետո, ըստ երևույթին հոգնածությունից դրդված, նստեցին խոտհարքում եղած թփուտների մեջ՝ սկսելով ի-րենց մանկական անմեղ որոճը:

37 **Տրված հատվածներում քանի՞ որոշիչ կա:**

- Իմ սրտում միայն սառած հեկեկանք,
  Բայց արցունք չկա իմ սև օրերում:
- Քո պայծառ գահի անհաս բարձունքից
  Մի՛ մերժիր սրտիս աղոթքը անբիծ:
- Իմ շիրմին դալկացող ծաղիկնե՛ր ցանեցեք,
  Որ խաղաղ ու հանդարտ մահանան:

38 **Բառերից քանի՞սն են հնաբանություններ.**
կապարճ, այրուձի, աշտե, տեգ, հրացան:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. ուսուցում, 2. ընտանեկան, 3. շահութաբերություն, 4. բարդույթավորում,
5. զգուշավորություն, 6. քնքշալի, 7. առօրեական, 8. ամանորյա, 9. վայրկենաչափ:

40 **Նշել այն շարքերի համարները, որոնց դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. սիրտը կպչել- սրտին կպչել
2. գլուխ գլխի տալ- խելք խելքի տալ
3. քարը քարին չթողնել- հողին հավասարեցնել
4. դեմքը կորցնել- դիմակը պատռել

41 **Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. նպաստեց, 2. կպավ, 3. կառչելով, 4. փախչելով, 5. հիմնում է, 6. ելնում է, 7. մեծանում եք, 8. արել եք, 9. տարա:

42 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

Նա գիտեր՝ Աստված պատժում է հանցավորին և օգնում է արդար մարդուն, նաև գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, և պիտի հաղթեր վերջինը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց:

1) **գիտեր** – պարզ ստորոգյալ, **Աստված** – ենթակա
2) **հանցավորին** – ուղիղ խնդիր, **օգնում է** – պարզ ստորոգյալ
3) **իր** – հատկացուցիչ, **թագավոր** – ենթակա
4) **հանցավոր էր** – բաղադրյալ ստորոգյալ, **վերջինը** – ենթակա
5) **այդ մասին** – վերաբերության անուղղակի խնդիր, **ոչինչ** – ենթակա

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում առոգանության նշան պիտի դրվի:**

1) Ես ինչ անեմ որ հոգիս չհեծկլտա կարոտից:
2) Եվ ով է հյուսել հեքիաթն այս վսեմ…
3) Ով քաղաքից էր հեռացել նա թողել էր մշուշը ծեր:
4) Ես ինչ անեմ որ մնա ծիածանը երեքգույն:
5) Ինչ էլ լինի ինձ հանկարծ չմոռանաս:

44 **Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Լինե՞ր մանկան արդար քուն
2. Լինե՞ր հեռու մի անկյուն
3. Հաշտ ու խաղաղ մարդկություն
4. Երազի մեջ երջանիկ

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Հոմանիշ բառերը սովորաբար պատկանում են միևնույն խոսքի մասին:
2. Հոմանշային շարք կարող են կազմել ոչ միայն բառերը, այլև դարձվածքները:
3. Հոմանշային շարքեր ունենում են բոլոր խոսքի մասերը, բացի դերանուններից, կապերից և շաղկապներից:
4. ***Մայրաքաղաք*** և ***քաղաքամայր*** հոմանիշներն իրարից տարբերվում են ոչ թե իմաստով, այլ ոճականորեն:
5. Հոմանշային շարքի ելակետային բառը ամենաքիչ գործածություն ունեցողն է:
6. Հոմանշային շարքի բոլոր բառերը միշտ կարող են փոխարինել իրար:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Հո-եկան (1) սաստիկ խ-ովքի (2) միջոցներին Սմբատը որև- (3) կերպ սիրտը թեթևացնելու պահանջ էր զգում: Մինչ այժմ նա, ա-փոփված (4) ինքն իր մեջ, ապրել էր հեռվում: Այս նոր միջավայրում ոչ ոք չէր ներում նրա անու-ելի (5) սխալը: Մոր ու քրոջ՝ հարսին վար-աբեկող(6) բողոքները գ-գռում (7) էին այն զգացումները, որոնք նա թմրեցրել էր ի-ը(8) տարի շարունակ: Չուներ ուղղամիտ ընկեր, և դա ստիպում էր հուսախա-(9) փախչել մարդկանցից՝ որոնելով մի անդո-ավետ(10) անկյուն:

1) 1-ք, 2-ռ, 3-ե, 4-ն, 5-ղ, 6-ք, 7-ռ, 8-ն, 9-փ, 10-ր
2) 1-գ, 2-ռ, 3-է, 4-մ, 5-ղղ, 6-կ, 7-ր, 8-նն, 9-փ, 10-ր
3) 1-ք, 2-ր, 3-ե, 4-ն, 5-ղ, 6-ք, 7-ռ, 8-նն, 9-ք, 10-որ
4) 1-գ, 2-ռ, 3-է, 4-մ, 5-ղղ, 6-կ, 7-ր, 8-ն, 9-ք, 10-որ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.**

1) փոխատվություն, անընդհատ, գրգիռ, հետաքննություն
2) թռչնորս, խնձորուտ, նստակյաց, առտնին
3) սղոցաձուկ, տնտեսվար, ինքնաբերաբար, պտտահողմ
4) մշտամնա, ատենադպիր, միակտուր, դյուրընթեռնելի

48 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.**

1) ՌՊՀԲ - 1672
2) ՅԿԹ - 379
3) ՆԾԱ - 451
4) ՌՇԽԳ - 1943

49 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Այգեբացից առաջ գյուղացիները կարգի են բերում իրենց գործիքները:
2) Հայերեն լեզվի իմացությունը պարտադիր է պետական կառավարման մարմիններում:
3) Մայրը վերջապես տեղի տվեց որդու թախանձագին խնդրանքին:
4) Հուշ-երեկոյին ներկա էին զոհված ազատամարտիկների ծնողները, ընկերները, մի շարք օտարերկրացի հյուրեր և այլք:

50 **Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***արյունը ջուր դառնալ*** - սահմռկել, ***աչքերը փակել*** - մեռնել
2) ***աչքը ջուր կտրել*** - կարոտով, անհամբերությամբ սպասել,
   անձյուն ձմեռ - անճարակ մարդ
3) ***գլխարկը թեք դնել*** - նորաձև հագնվել, ***գլխին տալ*** - զղջալ
4) ***ժամավաճառ լինել*** - իզուր ժամանակ վատնել, ***երեսից կախվել*** - թախանձել

51 **Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:**

1) ճտքակոշիկ - ***ճիտ, կոշիկ***՝ արմատներ, ***ք***՝ ածանց, ***ա*** ՝ հոդակապ
2) ծաղկահասակ - ***ծաղիկ, հաս***՝ արմատներ, ***ակ*** ՝ վերջածանց, ***ա*** ՝ հոդակապ
3) ծածկախորհուրդ - ***ծածուկ, խորհ***՝ արմատներ, ***ուրդ*** ՝ վերջածանց, ***ա*** ՝ հոդակապ
4) հետնամուտք - ***հետն, մուտ***՝ արմատներ, ***ք***՝ վերջածանց, ***ա*** ՝ հոդակապ

52 **Ո՞ր տարբերակում համանունների բացատրության սխալ կա:**

1) ***չկամ*** - անբարյացակամ, ***չկամ*** - ***կամ*** բայի ժխտական խոնարհման բայաձև
2) ***պապ*** - ծնողի հայրը, ***պապ*** - կաթոլիկ եկեղեցու առաջնորդը
3) ***տալ*** - հանձնել, ***տալ*** - ամուսնու քույրը
4) ***աներ*** - ամուսնու հայրը, ***աներ*** - անել բայի ըղձական բայաձ

53 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Երբ վրանի մոտ լսեց մոր բոբիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ:
2) Կամսարյանը հրաժարվեց այդ խմիչքից՝ առարկելով, թե գինին դեղին գույնի է, ինչն առաջացել է շշի կեղտից կամ օղու հնությունից:
3) Արևը մայր մտնելու մոտ էր, ծովակի կողմից փչում էր զով քամի, իսկ եղանները բարձրանում ու համաչափ իջնում էին:
4) Պետրոսը տարիներ շարունակ ապրում էր միայնակ ու անօգնական:

54 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված անցյալ կատարյալ ժամանակով:**

1) սիրենք, չդրեցի, թռավ, տվեց
2) նայեց, զարգացրու, տեսավ, գտան
3) հագավ, մեծացար, առանք, հասաք
4) մոտեցրի, չեմ թռչի, գրեցիք, աղաց

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Նա վեր կացավ և մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով, ինչպես կես դար առաջ:
2) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի զամբիկ՝ տեղական ձիերից բարձր:
3) Կապույտ երկնքում՝ արևի կողքին, մի երկու րոպե շողում են սավառնակի թևերն ու մարմինը:
4) Մեղվանոցի մոտով՝ ձորի ճանապարհով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:

56 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
2) Իսկ Արարատյան դաշտում բերքահավաք է:
3) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
4) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:

57 **Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:**

Հոգնած նայում եմ ճամփաներին,
Սերմնացանները չդարձան տուն:

1) ձևի պարագա
2) ստորոգելի
3) որոշիչ
4) պատճառի պարագա

58 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- Հոգիս չի հանդարտվում,- հետ ու առաջ քայլելով՝ կիսաձայն ասաց սեպուհը, ապա ավելացրեց. - Նրանցից միայն դավադրություն եմ սպասում:

1) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուհը կիսաձայն ասաց, ապա ավելացրեց, որ իր հոգին չի հանդարտվում. նրանցից միայն դավադրություն է սպասում:
2) Սեպուհը կիսաձայն ասաց՝ հետ ու առաջ քայլելով, թե իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ միայն դավադրություն է ինքը սպասում մեզանից:
3) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուհը կիսաձայն ասաց, որ իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ նա նրանցից միայն դավադրություն է սպասում:
4) Հետ ու առաջ քայլելով՝ սեպուհը կիսաձայն ասաց, որ իր հոգին չի հանդարտվում, ապա ավելացրեց, որ ինքը նրանցից միայն դավադրություն է սպասում:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:**

1) Նախկին կասկածները հանկարծ տեղի տվին մի վստահության, որ կարծես հենց նույն րոպեին ծնվեց յուր մեջ դեպի բարի դայակը:
2) Առաջին փորձերից արդեն երևաց, որ թատերական աշխարհ է մուտք գործել արվեստի մի իսկական նվիրյալ:
3) Մեր զորքերից մի քանի գունդ շուտով պիտի հասցնենք թագավորին, քանի որ ներքին գավառներում ապստամբություն է ծագել:
4) Պահապանները, ի նշան խոհեմության, նիզակները խոնարհեցին այնքան, որ դրանց սուր ծայրերը կպան գետնին:

ա. որոշիչ
բ. չափ ու քանակի պարագա
գ. պատճառի պարագա
դ. ենթակա

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ

60 **Ենթակայական դերբայը ի՞նչ պաշտոնով հանդես գալ *չի* կարող:**

1) բացահայտչի
2) որոշչի
3) ստորոգելիի
4) պարզ ստորոգյալի

61 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Նրանք՝ բամբասասեր մարդիկ, զանազան հանելուկներ բացահայտելու համար (այդ հանելուկները ոչ մի կապ չունեն իրենց հետ) ծախսում են ժամանակ, աշխատանք և նույնիսկ փող:
2) Դժվար է ասել՝ բամբասող մարդիկ չա՞ր են, թե՞ սոսկ իրենց էության մեջ թաքնված հետաքրքրությունն է նրանց մղում առաջ, բայց այդ դժվարըմբռնելի գաղտնիքն ունի մի պարզ հետևանք. նրանք չարախոսում են:
3) Մի ուրիշ օր զբոսնում էին Վանա փթթող այգեստաններում, որոնք քաղաքի հարավարևելյան կողմից տարածվելով դեպի հարավ-արևմուտք՝ ամփոփում էին իրենց մեջ փոքրիկ ավաններ, շեներ ու գյուղեր, իշխանական ամառանոցներ:
4) Եթե չլիներ հետաքրքրասիրությունը, մարդկությունը չէր զարգանա, և գուցե մարդկություն չլիներ էլ:

62 **Նշվածներից ո՞վ է միջին հայերենով ստեղծագործել:**

1) Գրիգոր Նարեկացին
2) Ֆրիկը
3) Սայաթ-Նովան
4) Դանիել Վարուժանը

63 **Ո՞րը բանաստեղծական ժողովածու *չէ:***

1) «Աշնան մեղեդի» Վահան Տերյան)
2) «Հացին երգը» (Դանիել Վարուժան)
3) «Եղիցի լույս» (Պարույր Սևակ)
4) «Նոր տաղեր» (Միսաք Մեծարենց)

64 **Բառերից քանիսո՞ւմ արմատի հնչյունափոխություն կա.**

մանրել, մտնել, կառույց, աղմկալի, ընկուզենի, դռնապան, բոպեական, գործունեություն, գիսավոր, կիսալուսին, ընչաքաղց:

65 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**

Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ջրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

66 **Հետևյալ գրողներից քանի՞սն են ստալինյան բռնությունների տարիներին զոհվել կամ աքսորվել.**

Շահան Շահնուր, Եղիշե Չարենց, Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց, Գուրգեն Մահարի, Նաիրի Զարյան, Հովհաննես Շիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան:

67 **Նշել այն բառերի համարները, որոնք միմյանց հականիշ են.**

1. բերրի, 2. վեհանձն, 3. արգավանդ, 4. ճղճիմ, 5. որոշակի, 6. փոքրոգի:

68 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

Նրա՝ ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր համարյա աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը, իսկ արծվային քիթն անգամ ծածկված էր մազերով:

1) **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով, **պես** –կապ, հետադրություն
2) **սկսվում էր** – սահմանական եղանակ, կրավորական սեռ, **համարյա** - մակբայ
3) **ամբողջ** - անորոշ դերանուն, **երեսը** - գոյական, ուղղական հոլով
4) **ծածկված** – **ա** խոնարհման բայ, չեզոք սեռ, **արծվային** –ածական
5) **անգամ** – վերաբերական, **մազերով** - գոյական, գործիական հոլով

69 **Նշել այն բառերի համարները, որոնք ուղիղ խնդիր են:**

Թագավորի 1. **շքախմբի** 2. **անդամները** զբոսնում էին հինավուրց 3. **մայրաքաղաքում** և ուշադիր դիտում 4. **շրջակայքը**, և 5. **նրանց** ապշեցնում էր քաղաքի աշխույժ 6. **եռուզեռը**:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր** ***Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ*** **տարբերակներից որևէ մեկը:**

1. Նախադասությունները երբեմն չեն ունենում գլխավոր անդամներից որևէ մեկը:
2. Գլխավոր անդամ չպարունակող նախադասությունները կարող են լինել թերի կամ միակազմ:
3. Թերի նախադասությունները լինում են զեղչված ենթակայով կամ զեղչված ստորոգյալով, ընդ որում, ստորոգյալը կարող է զեղչվել ամբողջովին կամ մասամբ:
4. Թերի նախադասություններում ամբողջությամբ զեղչված ստորոգյալը չի կարող վերականգնվել:
5. Միակազմ նախադասությունները լինում են անենթակա և անդեմ. վերջինները իրենց հերթին լինում են անվանական և բայական:
6. Երկու միակազմ նախադասություններ կարող են միավորվել և կազմել մեկ բարդ նախադասության: